



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Քիւ 11087
Փետրուար 25, 1964

Արժանաշնորհ
Տ. Միքայէլ ԶՀՆՅ. Գուծերո
Հոգեւոր Հովիւ Ս. Զարուծիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայէլ.

Ստացած ենք 1964 Փետրուար 21 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 26ին գումարուած Տա-
րեկան Միսկան ժողովը կատարած է Միսկան Խորհուրդի մասնակի ընտրու-
թիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած
անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական կա-
նոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է
ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ անգամ Միսկան
Խորհուրդի:

Տիարք՝ Հարրի Ազարիկեան
Արթըր Սիմոնեան
Ճիվան Յուսիկեան
Լեւոն Յովհաննէսեան
Եղուարդ Դաւիթեան

Կը յանձնարարենք որ Ձեր տարեկան հաշուեկշիռը եւ տեղեկագիրը,
ինչպէս նաեւ Միսկան Խորհուրդի նոր զիւանի անուն-հասցէները Առաջնոր-
դարան ղրկէք փութով:

Այսու օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան
տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մշամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Ազօթարք

ՄԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի